ԱՆԱՐԳ ՍԻՒՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Ահա անարգ սիւնն։—Նորա շուրջ խըմբուած
Խուռըն ամբոխը ալեկոծւում է.
Նա ըսպասում է։
Հասարակութեան ծաղրանքին մատնուած
Եւ դահիճներով չորս կողմից պատած՝
Դատապարտուածըն [1]) ահա քայլում է
Դէֆոյի նըշաւակ.
Բայց ոչ կորըցած ճընշող ամօթից,
Որպէս մարդասպան և գող-աւազակ
Կամ թէ արտաքսուած մարդկանց շըրջանից
Խայտառակութեան կենդանի էակ.
Ո՛չ. քայլում է նա, որպէս զօրավար,
Որ վերադարձած յաղթութեան դաշտից,
Բերում է իւր հետ անթիւ անհամար
Թանկագին իրեր՝ կորզած ոսոխից։
Առաջ է գալիս նա վեհ և հըպարտ
Եւ անարգ սեան մօտ կանգնում է հանդարտ։
Բայց ի՛նչ անողորմ խայտառակութիւն.

---

[1]) Դէ-ֆօ, «Ռօբինզօնի» հեղինակը, Անգլիայի քաղաքական, հասարակական և գրական նշանաւոր գործիչ, որին պատժեցին նորա մի գրքի համար—«The shortest way with the dissenters»։

Ծանօթ. հեղ.

Քրտինքով և ջերմ ջանքով վաստակած
Փառք, պատիւ, անուն —
Ցանկարծ բոլորը անարգ սեան մատնուած։
Սակայն բազմութիւնն չէր կարող ծաղրել
Քաջամարտիկ, մեծ իւր բարերարին.
Եւ չէր վիճակուած թշնամուն հրճուել—
Պարտութիւնը էր նորա սև բաժին։
Այն. չը լսուեց արհամարհական,
Ծաղրական քրքիջ ամբոխի բերնից,
Այլ «ողջոյն» հնչեց քաջալերական,
Եւ օդը թընդաց ծափ ու կեցցէից։
Եւ ամենուստեք ծաղկեայ պըսակներ
Դատապարտուածի չորս կողմ տեղացին,
Եւ հազարաւոր ցընծալի ձայներ
Նորա անունը փառաբանեցին։

Սակայն ո՞վ է դա, որ սեան մօտ կանգնած
Դառը և կրծու ծաղրի փոխարէն,
Անէծքի տեղակ լսում է յանկարծ
Բազմութեան «ողջոյն» և խըրոխտ «կեցցէ»։
Ո՞վ է դա, որի խընկելի անունը
Փառքով պըսակեց այն անարգ սիւնը։
Քարոզիչ է դա խըղճի մաքրութեան,
Կարող ջատագով իդէալների,
Հրեշտակ-պահապան հասարակութեան,
Բայց ինքը—բանտի և դահճի գերի։

Էջմիածին, 1892 թ., փետրուարի 25։